ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» հ.656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Երևան քաղաքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի վարչական տարածքում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը և կազմում է Երևանի հողային հաշվեկշիռը։

ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմվում է հողերի պետական հաշվառման ընթացիկ տվյալների հիման վրա։

Հողային հաշվեկշռում արտացոլվում են հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխությունները՝ հողի սեփականության ձևի, հողի օգտագործման ձևի, հողի նպատակային նշանակության, հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման, քանդման և այլ փոփոխությունները։

Երևան քաղաքի վարչական տարածքը 2014 թվականի հուլիսի 1-ի համեմատ փոփոխություն չի կրել և կազմում է ընդամենը՝ 22328 հա:

Գյուղատնտեսական նշանակության հողերը պակասել են 0.98 հա մակերեսով՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու արդյունքում և ներկայումս կազմում են 3351.2 հա։

Բնակավայրերի նշանակության հողերն ավելացել են 2.88 հա մակերեսով՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության /0.98հա/, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և այլ կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության /1հա/, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /0.9հա/ հողամասերի կատեգորիայից բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու, ինչպես նաև պակասել է 5.57 հա մակերեսով՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /0.1հա/, հատուկ նշանակության /4.5 հա/ հողամասերի կատեգորիա փոխադրելու և ընթացիկ տարում իրականացված ճշգրտումների /0.97հա/ արդյունքում և ներկայումս կազմում է ընդամենը 11836.6 հա։

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը ավելացել են 0.1հա մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիայից /0.1հա/ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու արդյունքում և ներկայումս կազմում են ընդամենը 3114.2 հա:

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և այլ կոմունալ ենթակառուցվածքների հողերը պակասել են 1 հա մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու արդյունքում և ներկայումս կազմում են 889.9հա:

Հատուկ պահպանվող հողերը 2014 թվականի հուլիսի 1-ի համեմատ փոփոխություն չեն կրել և այժմ կազմում են 995.1հա:

Հատուկ նշանակության հողերն ավելացել են 4.5հա մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիայից հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու արդյունքում և ներկայումս կազմում են 1092.3հա:

Անտառային հողերը 2014 թվականի հուլիսի 1-ի համեմատ փոփոխություն չեն կրել և կազմում են ընդամենը 875.8 հա:

Ջրային հողերը 2014 թվականի հուլիսի 1-ի համեմատ փոփոխություն չեն կրել և կազմում են ընդամենը 172.9 հա:

Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողերը 2014 թվականի համեմատ ավելացել են 19.4 հեկտար մակերեսով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով և ուղղակի վաճառքի միջոցով օտարելու արդյունքում /բնակելի կառուցապատման 7.6հա, հասարակական կառուցապատման 9.4հա, այլ հողեր 2.4հա/ և նեղնալումս կազմում են ընդամենը

Իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողերը 2014 թվականի համեմատ ավելացել են 3.0 հեկտար մակերեսով, ի հաշիվ համայնքային սեփականության հողերի և ներկայումս կազմում են ընդամենը 2679 հա:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը 2014 թվականի տվյալների համեմատ ավելացել են 4.4 հա մակերեսով՝ ի հաշիվ պետական սեփականություն հանդիսացող հողերի /4.2հա/ և ընթացիկ տարում իրականացված ճշգրտումների արդյունքում /0.2հա/, ինչպես նաև պակասել են 27.1 հեկտար մակերեսով՝ համայնքային սեփականության հողերի օտարման, անհատույց փոխանցման, հողհատկացման հիմքերի վերականգնման /22.6հա/ և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կազմում ներառվելու /4.5հա/ արդյունքում և ներկայումս կազմում են ընդամենը 10790.1 հա:

Պետական սեփականություն հանդիսացող հողերը վերոնշյալ փոփոխությունների արդյունքում կազմում են 3397.3 հա:

Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց սեփականության հողերը 2014 թվականի տվյալների համեմատ փոփոխություններ չեն կրել և այժմ կազմում են ընդամենը 14.9 հա:

Հողային հաշվեկշիռը կազմվել է հողերի պետական հաշվառում իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվառման ելակետային տվյալների հիման վրա, հաշվի առնելով տարվա ընթացքում իրականացված որակական, քանակական փոփոխությունները:

Հողային հաշվեկշիռը նախապես համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2011թ. փետրվարի 4-ի թիվ 19-Ն հրաման>>

30806.1

ՁևN 22

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2002թ. հուլիսի 1-ի թիվ 473-Ն հրաման>>

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)

առ 01.07.2015 թ.

Համայնք՝ | ք. Երևան | | 11

(անվանումը) (կոդ) /հեկտարներով/

NN	Նպատակային Նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը մարզի վարչական սահմաններում											
				Ընդամենը (2+3+4+8+12)	սեփականության սուբյեկտ										
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական				Օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների և ՀՀ-ում կայանալու
							ընդամենը (5+6+7)	տրված անհատույց օգտագործման	տրված վարձակալության	տրված անհատույց օգտագործման և վարձակալության չգրանցված	ընդամենը (9+10+11)	տրված անհատույց օգտագործման	տրված վարձակալության	տրված անհատույց օգտագործման և վարձակալության չգրանցված	
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր		915.6	335.0	15.5	565.2			565.2					
1.2		բազմամյա տնկարկներ,		301.9	190.9	28.5	82.5			82.5					
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգիներ		250.9	142.1	28.5	80.3			80.3					
1.2.2		խաղողի այգիներ		51.0	48.8		2.2			2.2					
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարքներ													
1.4		արոտավայրեր		722.2			699.4			699.4	22.8	22.8			
1.5		այլ հողատեսքեր		1411.5	2.6	3.7	1405.2			1405.2					
1		Ընդամենը		3351.2	528.5	47.6	2752.3			2752.3	22.8	22.8			
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		4527.8	3915.6	65.1	495.3			495.3	51.8			51.8	
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		2840.6	2598.6	0.1	241.2			241.2	0.7			0.7	
2.1.2		այգեգործական		625.1	625.1										
2.2		հասարակական		1770.0	436.9	483.9	436.8		1.2	435.6	412.4	412.4			
2.3		խառը կառուցապատման		1615.9	54.8	272.9	1286.9		3.8	1283.1	1.3			1.3	
2.4		ընդհանուր օգտագործման		1929.4		0.2	1929.2		15.0	1914.2					
2.5		այլ հողեր		1993.5	1.5		1992.0			1992.0					
2		Ընդամենը		11836.6	4408.8	822.1	6140.2		20.0	6120.2	465.5	409.2		53.1	
3.1	3. Արդյունաբերության, տրանսպորտի և այլ	արդյունաբերական օբյեկտներ		2361.2	403.3	1301.7	603.7		530.8	72.9	52.5			52.5	
3.2		գյուղատնտեսական		570.2	86.1	245.7	238.4			238.4					
3.3		պահեստարաններ		50.6	18.3	23.9	8.4			8.4					

3.4	Արոյրի ընդերքի	ընդերքի օգտագործման		132.2			132.2			132.2					
3		Ընդամենը		3114.2	507.7	1571.3	982.7		530.8	451.9	52.5			52.5	
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների	Էներգետիկայի		170.5		168.3	1.1			1.1	1.1			1.1	
4.2		կապի		11.5		3.6					7.9			7.9	
4.3		տրանսպորտի		532.0	0.8	23.6	15.2			15.2	492.4	492.4			
4.4		կոմունալ		175.9	0.9	17.4	88.0			88.0	69.6			69.6	
4		Ընդամենը		889.9	1.7	212.9	104.3			104.3	571.0	492.4		78.6	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական հողեր		79.3							79.3	79.3			
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր*		79.3							79.3	79.3			
5.2		առողջարարական		98.9							98.9			98.9	
5.3		հանգստի համար		161.2		0.7	159.4			159.4	1.1			1.1	
5.4		պատմական և մշակութային		655.8		17.5	638.3			638.3					
5		Ընդամենը		995.2		18.2	797.7			797.7	179.3	79.3		100.0	
6	6.Հատուկ նշանակության	Ընդամենը		1092.3							1077.4	1077.4			14.9
7.1	7. Անտառային	անտառներ		875.8							875.8	665.8	210.0		
7.2		թփուտներ													
7.3		վարելահողեր													
7.4		խոտհարքներ													
7.5		արոտներ													
7.6		այլ հողեր													
7		Ընդամենը		875.8							875.8	665.8	210.0		
8.1	8. Ջրային	գետեր		56.8							56.8			56.8	
8.2		ջրամբարներ		16.1		2.8	9.7			9.7	3.6			3.6	
8.3		լճեր		54.2		4.1	0.5			0.5	49.6			49.6	
8.4		ջրանցքներ		39.7			1.4			1.4	38.3			38.3	
8.5		հիդրոտեխնիկական և		6.1			1.4			1.4	4.7			4.7	
8		Ընդամենը		172.9		6.9	13.0			13.0	153.0			153.0	
9.1	9. Ճահճային	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ անօգտագործելի հողեր													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ /1+2+3+4+5+6+7+8+9/				22328.1	5446.7	2679.0	10790.1		550.8	10239.3	3397.3	2746.9	210.0	437.2	14.9

Երևանի քաղաքապետ _____ Տ. Մարգարյան

/ստորագրություն, կնիք/

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
2011թ. փետրվարի 4-ի թիվ 19-Ն հրաման>>

ՁևN 22ա

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
2002թ. հուլիսի 1-ի թիվ 473-Ն հրաման>>

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի հողային ֆոնդի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)
առ 01.07.2015 թ.

ք. Երևան

(Կոդ*)

NN	Նպատակային Նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	Կոդ N/N	մարզի վարչական սահմաններում					
				Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6)	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիներ ի	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային	պետական	Ստարարդիրյան պետ-ի, կազմ-ի և ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		785.4	326.8	23.6	435.0		
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը		301.9	190.9	28.7	82.3		
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		250.9	142.1	28.7	80.1		
1.2.2		խաղողի այգի		51.0	48.8		2.2		
1.2.3		այլ							
1.3		խոտհարք							
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը		1087.3	517.4	52.3	517.3		
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		2129.3	2093.7		35.6		
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		1505.0	1469.4		35.6		
2.1.2		այգեգործական (ամառանոցային)		624.3	624.3				
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		2129.3	2093.7		35.6		
3	3.Արդյունաբ, ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4.Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբ.								
5	5.Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7.1	7.Անտառային	անտառ		410.2				410.2	
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը		410.2				410.2	
8	8.Ջրային								
9	9.Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ				3626.7	2611.1	52.3	553.1	410.2	

Երևանի քաղաքապետ _____ Տ. Մարգարյան

/ստորագրություն, կնիք/